ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հունիսի 2016թ. թիվ 167-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 22-ի թիվ 46-Ն որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգի» 5-րդ կետի և ՀՀ Լոռու մարզպետի 08.12.2015թ. թիվ 375-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2016 թվականի հիմնական միջոցառումների պլանի 9.3.1. կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2016 թվականի հուլիսի 29-ին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով միջին ճնշման գազատարում առաջացած վթարի հետևանքների վերացում» թեմայով:

2. Ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով՝

1) ուսումնավարժության ղեկավար նշանակել մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ.Անտոնյանին.

2) հաստատել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելված 1-ի.

3) հաստատել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Ուսումնավարժությունում ընդգրկել.

1) Լոռու մարզային փրկարարական վարչությանը.

2) Վանաձորի թիվ 1 ՀՓՁ-ից մեկ մարտական հաշվարկ.

3) «ԳազպրոմԱրմենիա» ՓԲԸ Լոռու ԳԳՄ Վանաձորի ՏՏ-ի արձագանքող ուժերը.

4) «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի Վանաձորի էլցանցի 1 մասնագիտացված խումբ.

5) Ոստիկանության Լոռու մարզային վարչության Բազումի բաժնից 1 վերակարգ.

6) Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 5-րդ վաշտի հաշվարկը.

7) «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շտապ բուժօգնության ծառայության գծային բրիգադը.

8) Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժինը:

4. Ուսումնավարժության ղեկավար, մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ.Անտոնյանին՝

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը.

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

3) կազմակերպել համագործակցությունը ուսումնավարժության ղեկավարման շտաբի և ուսումնավարժությանը ներգրավված ուժերի միջև.

4) ուսումնավարժության անցկացումից հետո 5-օրյա ժամկետում ներկայացնել արդյունքների ամփոփման արձանագրությունը:

5) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2016 թվականի հուլիսի 25-ին:

5. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել փոխգործողությունների պլանները.

2) պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով, սարքավորումներով և տեխնիկայով.

3) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

4) ուսումնավարժության ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները, ինչպես նաև չվնասել պետական և մասնավոր գույքը.

5) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ.Անտոնյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. հունիսի 6
ք.Վանաձոր